

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 դր.
Տեղամասայ 6 «

ԱՐՏԱՍՈՂՄԱՆ


2 քիս մեկ ծրարով
Տարեկան 14 դր.
Տեղամասայ 7 «

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տր.
Տեղամասայ 1.50 «

ԿԱՆԽԻԿ

Մանուցման արդ
20 տանքով



ԼՐԱԳԻՐ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏՑԷ

Rédaction du journal

„Ipravounk“

VARN A (Bulgarie)

Редация

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Իրավունկ ևս
չեն տրվիր

«ԻՐԱՎՈՒՆԿ»Ի

ՕՐԱՅՈՑՑԻՐ

1902

Այս շաբթու երեք օր Պուլկարաց Ծնունդ ըլլալուն պատճառաւ «Իրաւունկ»-ի չորեքշաբթի օրուան թիւը չի հրատարակուեցաւ: Մենք այդ պատճառը փոխարինելու համար մեր բաժանորդներուն պիտի զրկենք մէջ մէկ պատի Օրացոյց: Նոյնը ըրած էինք նաեւ անցեալ տարի, որով մեր յարգոյ բաժանորդները գոհ մնացած էին, կը կարծենք թէ այս տարի ալ աւելի գոհ պիտի մնան, քանի որ նոր Օրացոյցը՝ որ կը պատրաստուի, իր պարունակով թեմամբ նախորդէն աւելի ճշիւ է:

ՓՐԱՆՍԱ ՌՈՒՍԻԱ

ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Ծանօթ հայաստէր լիբերալ Պէնար ուշագրտաւ յօդուած մը հըրատարկած է թուրքոյ վրայ Ռուսիոյ տը Բարի հանգեսին մէջ որուն տնօրէնն է հաշտակարար պատմագէտ ու ակադեմական Էրնէստ Լափիս, որ հայկական խնդրոյն ամենէն աւելի եռանդուն ախորժանն էր: Աին է ու անդամ Ֆրանքօհայկական քովդէին: Այդ յօդուածին մէջէն կը ներկայացնենք մեր խնդիրը շոշափող քանի մը մասեր:

Պ. Պէնար ցուցնելէ ետք թէ ինչպէս Ֆրանքօթիւրք պայքարին մէջ բոլոր պետութիւնները նոյն իսկ Գերմանիան, որոց Ապախի Համիտ գիւմաշ էր, իրարու ետեւէ անոր զէմ կեննն, կըսէ, թէ միայն Ռուսիան երկու ամիս լռեց ու յետոյ իր գիտական Մ. Չինովիեֆ Ենկալը և Դուռը երթալով պատուիրեց որ Ֆրանսայի պահանջները ընդունին, Եթէ այդ միջամտութիւնը քիչ մ'ալ յապագէր Չինովիեֆի մտքաստուգներն ալ գրաւել պիտի հարկադրուէինք, որով խնդիրը պիտի ծանրանար ու թերեւս Ֆրանսան իր զէմ ուրիշ նաւատորմիկներ տեսներ:

«Բայց ռուս զեականը ինչո՞ւ աւելի կ'անուխ չի միջամտեց. որուն մէկ խնամքը կարող էր Սուլթանը

կրցնել: Այդ տեսնէն էր որ Չար Բարիկ կուգար յայտարարելու թէ երկու զինակից ազգերու յարաբերութիւնները չեն փոխուած սակայն այդ մասնաւոր պարագային մէջ երկու պետութիւնները համաձայն չէին. որովհետեւ Տէլքուէի տնօրէնողը պահանջումն էր ռուս ետեւը Ֆրանսական մամուլին ու խորհրդարանին ուրիշ պահանջումները կը նշմարուէին. մեր «Թրքական խնդիր» ըսելը «Հայկական խնդիր» կը հասկցուէր: Թէեւ թուրքին հետ մեր խզումը թուային-Լորանտոյի առնելիքն էրովը մէջտեղ կուգար. բայց իսկապէս մեծ վէճը 1897էն կըսկսի, հայկական կոտորածներու հետեւանքներէն: Այդ կոտորածներու ատեն շատ մը Ֆրանսացիներ ինչքերին ու կեանքերին կորսնցուցին: Թուրքը թէեւ ճանչցաւ իր պատասխանատուութիւնը և հատուցումներ խոստացաւ, սակայն չորս տարիէ ի վեր իր հետադարձութիւնն ըստ մը չի գործադրեց: Ահա ճշմարտութեն մեծ վէճը: Ֆրանսան 300 տարիներէ ի վեր քարոզչութեամբ սկսած է Արեւելքի մէջ մարդկութեան և քաղաքակրթութեան գեղեցիկ գործը. երեք դարերէ ի վեր ջանքեր ու գրամ շրջալիւծ պիտի ըլլար որպէսզի մոլեգնութեան երկու ամառներու մէջ կայսերական տնտեսի մը արինաթաթաւ «փոքր ձեռքեր» ֆրանսական գլխաւորութեան այդ յիշատակարանը տեսնէին:

«Ֆրանսան ունի գաշտագիրներով իրաւունք իր զոհուած ազգակիցներու համար հատուցում պահանջելու: Բայց դաշտագիրներու իմաստը, ինչպէս չորեքշաբթի տեսնուող հատուցումներ իրեն իրաւունք կուտան իր հպատակներէն զատ իր պաշտպանեալներուն ալ, որոնց մէջ է Հայ ազգին մէկ ամբողջ մասը, հետաւում ըլլալու: Կոտորածներու ատեն Հանթին մէկ կողմ ձգեց այդ իրաւունքները. բայց արդի նախարարը զանոնք ձեռք առնելու տրամադիր կերեալով:

«1896ին Հոպանօֆի իշխանը ինքնապէս փախցուց թէ «Փոքր Ասիոյ մէջ ուրիշ Պուլկարի մը պիտի

չի թողալէ ինք»: Խնդիր մը վերջապէս ռուսները կը լռեցան. տէ թրքական Հայաստանի մէջ իրենց ապագայ քաղաքականութիւնը սահմանելու: Անտուրուի երկաթուղիներու խնդիրն է այդ: 1900ին Գոնես-Պաղտատի գիծը գերմանացիներուն տրուեցաւ: Ռուս զեականը, մեղադրեց Գերմանիան ուժ գտած, կարծոյ ու Տրակալի վերաբերման համար բերանացի խոստում մը կընդունի: Քորուզը ցուց կուտայ թէ այդ լռեցումները սովորական լեզուի մէջ ինչ կը նշանակին: Մէկ խոսքով, Ռուսիան կը պահանջէ ռուսի Մեծ Հայաստանի գրաւումին հարկաւոր բոլոր գծերուն հսկողութիւնը: Երբ Չինովիեֆի մէջ իր գործը լրացնէ, Մանչուրիան ստանայ և Բորթ Ալթուրը ապահովէ, իր գործիչները ու ռազմավարները ազգին պիտի փոխադրէ, Ալեքսանդրէզ օր մը պիտի ըլլայ: Նոր Բորթ Ալթուր մը ու թրքական Մեծ Հայաստանը չինական նոր Մանչուրի մը:

Մ. Վիքթոր Պէնար այս խօսքերով Մ. Չինովիեֆի լրացումները կը վերջացնէ ու կըսէ «Կը հասկնաք հիմակ թէ Ռուսիան ինչու համար երկու ամիս վարանեցաւ Ֆրանսական պահանջներուն ուժ տալու. ու մեր «Թրքական խնդիր» «Հայկական խնդիր» թարգմանութիւնը ինչո՞ւ: Բէզը պուրկի հաւանութիւնը ընդունած չէ: Նուեւ կը հասկնաք խորհրդարանին մէջ մեր նախարարին լեզուն, որուն նոյնի է ինչ կը պատուին «Հայաստանը»: Նախարարը յայտնապէս նեղը ինկած ամեն խոստում կը մերժէր. մի գուցէ բարեկամ պետութեան (Ռուսիոյ) վերջին միջամտութիւնը ստացուած ըլլալ հայկական խնդրոյն վերայ պայմանադրութեամբ մը: Մ. Տէլքուէն պարտի Հայաստանի մէջ իր քաղաքականութեան սկզբունքները յաւաքիչալին պարզել, Պէնար է սպասել: Կրէտական խնդրոյն մէջ անոյ վարմունքը չի մոռցող. ներք կը յուսան թէ կրկին 1898ի իր լեզուն պիտի գործածէ: Բայց կէտ մը կայ որ հիմակուրէն ըստ ուերի մէջ պէտք չէ ձգել: Ռուս

ները Մեծ Հայաստանը կուզեն, ու մեր ընդհանուր քաղաքականութիւնը մեզ գէպ անոնց կը կապէ: Արդեօք ըսել կուգուի թէ հայկական խնդիրը անմերձեանալի ըլլալ: Մեծ Հայաստանը ամբողջ Հայաստանը ըսել չէ, ու առ այժմ ֆրանսական խնդրոյնը պիտի գոհանար եթէ կոտորածները գէթ ընդմիջող վերջնական փոքր Հայաստանի այդ անկիւնը. ուր, անյիշատակ ժամանակէ ի վեր իրական թեւարկութիւն մը տածեցինք, այդ զիւցաղական Չինովիեֆին մէջ որ Պէրուի ժողովը շատ մօտ է, կրնայ ու պարտի հայկական լիբերալները ըլլալ: 1863ին, Ֆրանսական զեականը Դրան կը յայտարարէր թէ «Ֆրանսան Չինովիեֆի միջոցով անկախ ու տնօրէնեալ ապառ ճանչցած է»:

ՀԱՅ ՀՈՐԱՎԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ

ՕՏԱՐՄԱՆ ՈՒԹԻՒՆԸ

Վենետիկի Բազմալիկ ամսազրին մէջ Հայր Ս. Երէմիան հետեւեալ գաղղ և խուսափողական տողերը կարճամտորէ Հայ Հռովմէականներու օտարամտութեան մասին: Այդ տողերը նոյնութեամբ հոս արտատպելով, մեր գիտողութիւնները կաւելցնենք մի քանի չփոթ կէտեր լուսարանուած տեսնելու բաղձանքով:

Ուստի շատ գիտեմ ամա մէկ ջունիւն (1) այլ ևս այս առածը չի գործը, քանի որ լրագրութեանը կը պահանջուին անաշտութիւն, արդարութիւն, ճշգրտութիւն, պէտք է ըստ պարագային յանուն ճշմարտութեան, խաղ ալ գիտնալ ձէն էլ ունենալ, եզրապատի վերաբարձեալ «Փարոս» կը ստիպէ զմեզ ձայն հանել և նկատողութեան առնել Հայ հոռմէական հասարակու-

1. Այս առածը որ կեղծաւորութիւն կ'արտայայտէ բնաւ չի վայելը եկեղեցականի մը, որուն պաշտօնը ու պարտականութիւնն է միայն առաջ կեղծիքի քարոզել համարձակ ինչ որ գիտէ: Լրագրապետ մը շատ աւելի սկզբնականը անաշտ ըլլալ պարտի միջոց. ոչ թէ «ըստ պարագային»

Թեան մէջ տարածուած մի ոչ տխուր-
 ժելի սովորութիւնն էրք հին տխուր
 գէպերը ծագեցան երկու համարին
 հայ հասարակութեան մէջ. անորոշ ու
 հայածուած մասը — Հոռութեանը,
 դառնացած ընդդէմ իրենց եղբայրնե-
 րուն, ուղեցին անոնց հետ ամեն յա-
 րաբերութեան կապերը խզելու. ասե-
 լով թիւն մը ծնաւ ընդդէմ հայ ազգ
 անուան եւ զուտ հակակաւ անուանց
 եւ յոյն օրերէն սկսեալ, երբ անոնց
 կը հարցուի ի՞նչ ազգէ ըլլալին կը
 պատասխանեն. «Մենք կաթոլիկ ենք»
 եւ յոյն օրէն ի վեր Ստեփանները՝
 էջիլն. Պողոսները՝ Փօլ, Յովհաննէս-
 ները՝ Ժան, Մարիամները՝ Մարի,
 Ռաֆէլները՝ Ռաֆէլ կոչուեցան. եւ
 միեւնոյն միաժխտ սովորութիւնը գեւ
 կը շարունակուի. սովորութիւն մը,
 որ հայածանքէ ծագած էր, այժմեան
 խաղաղութեան եւ համարալիութեան
 ու եղբայրութեան օրերուն, փափա-
 քելի էր որ դադարէր: (2)

Մենք կը դատապարտուինք «Փա-
 րօսէն», հայ հասարակութեան այդ
 զանգուածին օտարամտութեանը զէմ
 չի պատերազմելու համար, սակայն
 կը դառնար որ Պատ. «Փարօս» կը
 սխալի. Միութեանը ամեն մէջ ինչ-
 պէս կարելի չէ ֆրէնկի անուամբ մի
 վարդապետ դառնել, յոյնպէս կարելի
 չէ որ յոյն վարդապետներու խնամ-
 քին յանձնուած աշակերտները կամ
 անոնց ձեռքով մկրտուած երախայ մը
 օտար անուն կրէ: Մեր այս ճշմար-
 տութեան իրերէ փաստ ի մէջ կը ըն-
 րենք ժամանակուան արքայի հառա-
 րակութիւնը, ուր շատ զգուար է
 գտնել մի խորթ օտարազգի անուն,
 ամեն երախայ մանկուծիներն սկսեալ,
 կոչուեր է Գարեգին, Տիգրան, Լեւոն,
 Սիւրաբ, Երուանդ, Ստեփանիկ, Անա-
 հիտ, Հայկանուշ եւ Հոփսիմէ անուն
 ներով: Պատ. Արիւստի թերթը կրը-
 նայ ուրախ ըլլալ, որ Միութեանը
 ոչ թէ այդ օտարութեան զէմ լուսն ու
 մաշկ կեցելը է, այլ կուսեր է ի սէր
 հայրենի աւանդութեան: (3)

Այժմեան Հայ հոռութեաններէն մի
 մասը, հայերէն չի խօսելու եւ հայ
 հարազատ անուններ չի գործածելու
 օրինակ որ պատճառ մը չունի: (4) Ընդ
 է՝ փոխանակին երբ տեղ տեղ արգի-
 ուած էր հայերէն խօսելը, անխու-
 սափիլ էր օտարազգի լեզուին եւ ա-

2. Սղոթեան, լեզուի եւ ողոր-
 գին անուններու ուրացումը արգա-
 րացնելու չափ հարածանք կամ բռնու-
 թիւն երբեք չէ ծագած Հայոց եւ Հայ
 հոռութեաններէն միջեւ: Եւ այս
 վերջինները այդ սխալ հոսանքին մը-
 զողք Հոռութեան կաշառուած փառապանք
 եկեղեցականները եղած են կարծեմ:

3. Ընդհանրապէս, որչափ գիտենք,
 Միութեանը ճակատագրայ կոյն, չեն
 մղած այդ օտարամտութեան զէմ. ի-
 րենց սեփական կարծիքէն չի չեղիլը
 կոռիլ չնշանակելու Միջոցառ իրենց նուր
 րական պարտականութիւնն էր թէ՛
 մամուլով եւ թէ՛ եկեղեցիներու ընդ-
 րէն կողմից ու քարոզել անդադար,
 ոչ թէ գաղջ ու աստիակ դարձուածնե-
 րով ունկնդիրներէ ոմանց անհաճոյ
 երեւոյթ խորշիլ:

4. Երբ կըսէ «մէկ մասը օրինաւոր
 պաճառ մը չունի», կը հարցնենք ո՞ր
 մասը ունի օրինաւոր պաճառ. եւ
 ո՞րն է այդ պաճառը, որ Հայ հոռ-
 ւեականաց մէկ կամ մէկ քանի մա-
 սերուն համար գոյութիւն ունեցած
 ըլլայ, հայերէն չի խօսելու եւ հայ
 հարազատ անուններ չի գործածելու
 ու յոյն իսկ իրենք զիրենք «Ֆրէնկ»
 գաղղիացի անուանելու:

նոր անուններու ին, ուստի ստի-
 պողական պատճառով տեղ տեղ,
 հայ հասարակ- ը սկսեւ մոռնալ
 իր մայրենի լե- եւ ուրիշ ազգաց
 անունները հարկադրեալ ընդունել: (5)
 Ուայրենի լեզուն այդ կերպով մահա-
 ցու հարուած մ'ուսեւ պարագաները
 փոխուեցան, սակայն ընդ լեզուին
 դարմանը չեղաւ. օտար լեզուն եւ
 օտար անունը քնքուշ նորածնու-
 թեան իւր օտարամտութեան կերպա-
 րանք մ'առնաւ. եւ կը դառնար ըսելու
 որ այս տխուր օտարամտութիւնը եր-
 թաւով կը տարածէ իր ճիրմները,
 եւ մեզ համար այդու անըմբռնելի է՝
 մեր նուիրական լեզուի եւ անուանց
 զէմ ծագած կոյր հակակրօթեան եւ
 ասելով թեան պաճառը, ասելով թիւն
 մը որ տխուր է ըսելն այժմ յոյն իսկ
 Լուսաւորչական հասարակութեան մէջ
 մտած է: (6) Ունդրելի է մտնել յոյն
 դատաւարի մի քանի ազնուապետա-
 կան զանգուածին մէջ, եւ պրպակ ի-
 մանալ թէ ի՞նչ է անոնց խօսած լե-
 զուն, ի՞նչ անոնց անունը: Եւ եթէ
 ներսի յոյն իսկ հարցնել «Փարօ-
 սին, թէ ի՞նչ ազգէ է իր Պատ. յո-
 դուածագրին Չամուզիս անունը» փա-
 փաքելի էր որ «Փարօսին» հետ մը
 միւս թերթին ալ օտարամտութեան
 զէմ կուսէին, խաղաղանէին այդ ա-
 լելորդ թեթեւամտութիւնը:

Բազմապէս

ԹՂԹԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօֆիա, 24 դ'կտեմբեր

Մ. Գարապէտով հակառակ իր
 եղբւորացեալ համարին չի կրցաւ
 վեր ապէս գլուխ հանել փոխա-
 ռութեան խնդիրը, չի կրցաւ հա-
 ժողել երեսփոխանները եւ հարկա
 դրուեցաւ չորս ձանի մեծամաս-
 նութեան առջեւ խոնարհել ու մէկ
 կողմ բաշտիլ. թէեւ ինք այնու-

5. Այդ այլադասկ սխալը միայն
 Հայ հոռութեանները ըրին ոչ թէ
 բռնութեան տակ, այլ քմահաճոյքի
 համար:

6. Հոս պարզապէս կը զրգարեւ
 Լուսաւորչական Հայերը. եւ մինք
 չենք զիտել ո եւ է հայ Լուսաւորչա-
 կան խմբակ մը որ հակակրօթիւն մը,
 ասելով թիւն մը ունենայ մեր մայրե-
 նի լեզուին եւ ազգային անուններու
 զէմ. այդ բանը դժբաղդապէս Հայ
 հոռութեաններու մէջ տեսնուած է
 եւ ցարդ հետքերը կը նշմարուին:
 Քաղցր է մեզ յուսալ թէ քիչ ատենէ
 այդ հետքն ալ պիտի անհետանայ ընդ-
 հանրանալու վրայ եղող ազգային ա-
 զատագրութիւն խանդովը որ կը հրահրէ
 հեղհեղեւէն էն կրօնամոլ մտքին իսկ:

Եւ որպէս զի հին տխուր գէպերէ
 ծագում առած բաժանումը, ազգային
 տեսակէտով բոլորովին ու չուտով ան-
 հետանայ, նուիրական պարտականու-
 թիւն մը կը ծանրանայ Միութեան
 հայրերուն վրայ, այն է գէթ սակէ
 վերջ, առանց երկդիմութեան եւ բա-
 ցորոշ կերպով գրել ու քարոզել մեր
 համարին կաթոլիկ եղբայրներուն, որ
 յարաբերութեանց մէջ խտրի չը գնեն
 մեր ու իրենց միջեւ եւ խաղաղ մոռ-
 նան հասունական այն գոնիկ ֆանա-
 թիկութիւնները, որոնց պատակաւ
 գոյութիւնը դժբաղդաբար ցարդ զգա-
 լի է, եւ որ մուծ ու խաղաղամած
 անկրօններու մէջ գեւ նորանոր աւե-
 րութիւն կը գործէ:

տեղու ամեն կերպով գործէ քա-
 շուկէ առաջ ժողովը լուծել տալ
 իշխանին, ու փութով երեսփոխա-
 նոց ընտրութիւնները կատարել
 տալով. նոր երեսփոխաններուն
 ներկայացնել փոխառութեան բա-
 րեփոխեալ ծրագիրը: Մ. Գարա-
 վէտով բաւական հաստատ լոյս ու
 նէր որ փոխառութեան Պաշտպանի
 աւելի շարժառիթը պայմանաւորով
 կ'ընեն նոր պայմանագիր մը.
 բայց ձխ-խտի մեռնչնքնքն պալ
 մանր բարեփոխելու լոյս չի կար
 գրեթէ. ահա այս կէտը ամենէ
 աւելի կը խրաչնդէ երեսփոխան
 ներս:

Վերջապէս քանի մը օրուան
 տատանումներէ, խորհրդակցու-
 թիւններէ վերջ անխառնափոփի ե-
 ղու Գահիճին հրաժարականը
 իշխանը երկար մտածումներէ յի-
 տոյ Մ. Գարապէտովի հրաժարա-
 կանը ընդունեց ամսոյս 24ին եւ
 պաշտօն տուաւ արտաքին գործոց
 նախարար Մ. Տանէվին նոր նա-
 խարտութիւն կազմելու: Հետեւ
 եւր կերպով կազմուեցաւ նոր Գահ-
 լիճը. Մ. Տանէվ Նախարարական
 եւ նախարար Առաքին գործոց,
 Մ. Սարաֆով Նախարար ներքին
 գործոց եւ առժամեալ վարչ. ե-
 լեւմտական գործոց, Մ. Գանչէվ
 որ Սօպրանիէի փոխ նախագահ
 էր, նախարար հանրային կրթու-
 թեան, Մ. Ռաստէվ Նախարար
 դատական գործոց, Մ. Լուսաւոր-
 յով Նախարար վաճառականու-
 թեան եւ երկրագործութեան եւ առ-
 ժամանակեայ վարչ. հանրօգուտ
 շինութեանց, եւ Մ. Բարրիքով
 (անփոփոխելի) Նախարար պատե-
 րապական գործոց:

Վերջապէս նոր Գահիճը հինէն
 կը տարբերի միայն երկու անձե-
 րով, մին նորն ինքն Մ. Գարապէ-
 տով եւ միւս՝ Մ. Պէլինովի բացա-
 կայութեամբ: Այսինքն Գարապէ-
 լիսաները բոլորովին բաժնուած,
 միայն Յանքովիստներ կազմած են
 արդ. գահիճը, որ բակ է զուտ
 առաստաղ կուսակցութեան ձեռք
 կը գտնուի այսօր Պաշտպանի
 վարչութիւնը:

Սօպրանիէն դեկ. 23ին իր նիս-
 տը վերսկսաւ. Նոր նախարարա-
 պետ Մ. Տօք. Տանէվ յայտարար-
 րեց թէ հրաժարեալ Գահիճին
 ծրագրին պիտի հետեւի, եւ պիտի
 աշխատի Պաշտպանի այսօր տա-
 ռապեցնող դրամական տագնապին
 զիմադրել ամեն ուժով, Յետոյ
 Մ. Տանէվ առաջարկեց նստաշրջա-
 նը երկարել մինչեւ Մարտ 1, ու
 քուէարկել երկու ամսուան տա-
 ժանայ երեսփոխան: Նախարար.
 րապետին առաջին առաջարկը մեր.
 ժուկցու ու մեծամտեղութեամբ
 որոշուեցաւ 24ին նստաշրջանը
 փակել, Արդէն Մ. Տանէվի ո եւ է
 առաջարկ ներկայացնել մեծ յան-
 ագնութիւն էր ներկայ Սօպրանի-
 էին, որուն մէջ իր կուսակցու-
 թիւնը (Յանքովիստ) փոքրամաս-

նութիւն մը կը կազմէ. Գարապէ-
 լիսաներ արդէն բաժնուած, ազ-
 գայականները (Նարոտնայք) ընդ-
 գիմագիր, վերջապէս երեսփոխան.
 ներս գրեթէ երեք չորրորդ մասը
 հակառակ է նոր Գահիճին: Շատ
 հաւանական կը գտնենք որ Սօպ-
 րանիէն այսօր ալ (երկուշաբթի)
 մերթէ երկու ամսուան տաժամոյ
 եղեւմացայցը, որով Մ. Տանէվ
 ստիպուի ժողովը լուծել տալ ու
 նոր ընտրութեանց ձեռնարկել.
 թէեւ չեմ համոզուիր թէ նոր ընտ-
 րութեամբ Յանքովիստները միտով
 մեծամտեղութիւն կարենան կազ-
 մել Սօպրանիէին մէջ:

ԵՐԱՐԱՐԱԿԱՆ-ՆԱԽԱԿ

Ուրախութեամբ կը ծանուցա-
 նենք Հայ հասարակութեան թէ
 Ռոնաճուզի Հայկական Ընթերցա-
 րանը՝ որ հիմնուած է տեղւոյս
 ընթերցասէր գրչիներուն մը
 տարին պարգագման նպատակով գի-
 տաւորութեամբ, իր տասնորդ
 տարին ընդարձակ՝ կը թեւակոխէ
 իր տասնամեկերորդ տարեշրջանը:
 Թէեւ մեր, Հայերուս մէջ, ըն-
 թերցանութիւնը ծաւալած չէ այն-
 պէս ինչպէս որ անհրաժեշտ է.
 թէեւ անկեւ երիտասարդներու
 շատ սահմանափակ շրջանակի մը
 մէջ մասն գտած է միայն — բան
 մը՝ որ կրթութեան եւ դաստիա-
 րակութեան մեր մէջ պակասու-
 թեան հետեւանք է — սակայն ու-
 րախ ենք հաստատելու թէ Ռուս.
 ճագի Հայկական Ընթերցարանը
 յաջողած է՝ ՏԱՍԸ տարուան ժա-
 մանակամիջոցներէ մէջ՝ բաւակա-
 նաչափ մասն որ անոնք մատակա-
 րարել բնութեամբն իր հասարակու-
 թեան:

Բացառաւոր ճշմարտութիւն մըն
 է թէ ամեն հանրային հաստատու-
 թիւն՝ ժողովրդին նիւթական եւ
 բարոյական սփռակցութեամբ կրնայ
 հաստատուն հիմքու գրայ կամ-
 գուն մնալ. արդ. գահիճականու-
 թեամբ կը ծանուցանենք թէ
 «Ռուսճուզի Հայկ Ընթերցարա-
 ն»ը շնորհիւ քաղաքիս Հայ հա-
 մայրքին ամեն տեսակ բաշտերու-
 թեան» կրցած է՝ անսայթաք,
 ընթերցող գէպի իր նպատակաւէ-
 տը:

Այս անուշ տրամադրութեան
 տակ կարգադիր Մանախումբս,
 Ընթերցարանի Տաննամեակը տա-
 նելու համար, կազմակերպած է
 Գրական-Երաժշտական հանդէս մը,
 որ տեղի պիտի ունենայ Նոր տար-
 ւոյ՝ յունվար 6ին, յոյն հասաւ-
 տութեան մէջ, եւ որու շքեղու-
 թեան ու փայլին համար ամեն մի-
 շոց ձեռք առնուած է:

Այս բարեպաշտէս աւթիւ, կոր-
 դաբիր Մանախումբս հրաւեր կը
 կարգայ բոլոր ինչպիսի Հեղինակնե-
 րուն, խմբագիրներուն, Հրատա-
 րակչիներուն, Գրադատներուն եւ
 կրթասէր Ազգայիններուն, որ բա-

րեհաճին նիւթապէս եւ բարոյապէս ստատարեյ Ռուսոսքի Հայկ. Ընթերցարանին, որով կարելի ըլլայ անպէտք յարստեւելի աւելի բարգաւաճ վիճակի մը մէջ եւ ինքնակատար գոհացում տայ քաղաքիս ընթերցասէր Հայ հասարակութեան: (*)

Կարգադիր Մանուկտուր իստյոյս է թէ իր հրաւերը լսելի պիտի ըլլայ Ռոգոյ ազգայիններէն, որոնց կանխաւ կը փութայ իր ջնքմագին շնորհակալքը յայտնելու:

Միտմբ յարգանք
Կարգադիր Մանուկտուրի կողմէն
Առնեադպիր Առնեապետ
Թ. Մուքիսեան Ռ. Մարափեան

Հասցէ
Հայկ. Ընթերցարան - Ռուսոսք
Իսկ պատահան նուէրները դրուելի Տ. Վաղարշակ Գոշյուսեանին

ՆԱԽԱՆ ԽՐԱԿԱՐԱԿԱՆ

... Խմբագիր

Ստորագրեալս եղբայր «Շարժում»-ի Թ. Բաղարճըի թղթակից Անտոն Շարիկեանի, կարգացի նոյն թերթի 377 թիւին մէջ եղբորս դրած ալլանդակ ստեղծելու իրեն թէ քաղաքիս Պատ. Թաղական խորհուրդը զորութիւն ընել է ազգ. վարժարանի դռնը, պատահանը, չըմանակները, աթոռ, գրասենյակները եւ կղմնարանները վերցնելով, որ պարզապէս թշուառական ոգով եղած խեղճութեամբ մըն է, ներկայիս հրապարակաւ կը յայտարարեմ թէ եղբայրս Անտոն Շարիկեանը, ձորս աշխատութեամբ ձեռք բերուած անկողինը վերմակ, սուրճի գաւաթ անուշի աման եւ ուրիշ գանազան կանկարասիներ եւ իրեղէններ անասթաթար գողցած է սուէնէն, հրաշակաւոր Տիգրան պատուելի խօսքին անտալով եւ զանաւոր անոր սուէնը փոխադրած, ու երբ մայրս «Ինչ իրաւամբ այս իրեղէնները կը խաբարակեմ ըսելով կընդգիծանար, եղբայրս հրեւոյ գետին ձգած է խեղճ մայրս: Իր զուգին վրայ գուրգուրացող եւ անոր աքորուած միջոցին, հակառակ ամեն զօրաւորութեան, անոր պէտք ունեցածը ճարելով հասցնող մօր մը հանդէպ տանկ գազանային վարմունք ունեցող ապրիտիսի մը գրածներուն ինչ կարեւորութիւն կրնայ տրուիլ եւ ինչ կարելի է յուսալ իրենպէսնելուն, թող հասարակութիւնը դատէ:

Իր եղբայրը
ԱՐՏԱՆԷՍ Յ. ՇԱՆԻԿԵԱՆ

Թ. Բաղարճը

ՇՈՒՄԼԱՅԻՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ԹԷ՝ ԽՈՒՍՈՒՄՈՒՄ

Պր. Շումլացի, «Շարժում»-ի 378 թիւին մէջ ձեր ազգաւ մաքի արտագրութեան մէջ նմանալ կարողացի:

(*) Կարծէ քաջալերիւ այս հաստատութիւնը, որ իր տեսակին մէջ ի Պուլկարիս միակն եւ Ռուսոսքի Հայ երկրորդագրութեան էն գլխաւոր պարմանքն է:

Ինչո՞ւ սակայն այդքան շուտ խոյս կը տաք հրապարակէն, զուր որ Շումլացի վարժարաններուն հրապարակային հոգածութեան առարկայ գտնաւորեն համար սրտի զեղումներով, երախտագիտական բացազանցութիւններով կը ողջունէք «Կայծ» ծածկանունով ներկայացող «ազնիւ անձնաւորութիւնը», ինչո՞ւ այժմ փոխանակ այդ մասին ձեզ գրածներուն պատասխանելու, ձեր ոյրմակական բարձրութեան յուսահատող մարդու ձեւեր կը թափէք, ապագային ձեր կատարելիք սիրագործութիւններու համար, այժմէն պոստալիտութիւններ կընէք, աջ ու ձախ շանթեր կարծաւէք, նման այն երախտային, որ ապտակն ուտելի վերջի, իր հակառակորդին կեցիք յետոյ ես քեզի կը սովորեցնեմ կը պատասխանէ: ասիկա ուրիշ բան չէ, բայց եթէ խոյս տալ:

Անկախ կամ առկա Պարոն, երեւի չէք ուզեր որ զիմանիդ վար առնուի ու ձեր ցնցոտիներով ու պատառոտած զենջակով վարձկան մը ըլլալիդ ցոյց տրուի:

Օ՛ր դիմակաւոր մօրալիսը, որո՞ւ են մաքուր նկարագիր ունենալու համար տուած քարոզներդ, աւելի լաւ կըլլար որ այդ բարոյագիտական դասերը նախ դուք ձեզ եւ ապա ձեր թղթական բարեկամներուն տալիք: Գիտեմ այս խօսքերն զարձեռով ձեզ պիտի վերցնէի, բայց ոչինչ, ձեզ նման խառնակութեան պաշտօն ստանձնող ախուր ասպետները — ինչ դասակարգի ալ որ պատկանին — ժամանակի ընթացքին մէջ զիմանալու ընդհանուր պարագիծ, եւ ասիկա հասարակական պիտի ապանջ մըն է, որու հանդէպ չէ կարելի անտարբեր գտնուիլ: (*)

Այժմ գաւաք բուն խնդրին: Դուք կը հարցնէք հոգաբարձութեան թէ՛ «եթէ իրենց տնօրէն դասաւորեն արժանաց տէր է, ինչո՞ւ չեն դնահատիկ զինք»։ Իսկ ես իբրեւ ուսուցիչ, ձեր այս հարցումէն մեկնուելով, պատմական իրողութիւն մը մէջ ընդհանուր առմամբ հայ ազգի մէջ ուսուցիչները չեն վարձատրուիր, ո՛վ հակացող Շումլացի այս ըստածին մէջ անձ կամ անհաս պաշտպանիլու խրնդիւր կայ, իսկ մասնաւորապէս խօսելով իմ մասին, եւ այդ պատմական ճշմարտութեան վրայ հիմնուելով, ուրու զուրք ալ համաձայն էք, նոյնպէս բացատրեցի թէ՛ նիւթական վարժարանութիւններէ առաջնորդուած չէ որ ուսուցչական ծանր պաշտօնը ըստանձնած եմ:

Գուք առանց ձեր խօսքերը մասնաւորելու, կը խօսէիք «թէյի չինոյ» վարժապետներու մասին եւ ձեր այս զատանգանքները, որոնք կուզէիք հոգաբարձութեան, կը պատկանէին Շումլացի վարժապետներուն, քաղաքավար պարոն եւ Շումլացի ճարակող փաստարան, որոնք իրապէս ձեզի բանաձեւ ըրած այս հարցերու պատասխանը: Աւելին կայ:

Պ. Շումլացի խօսքերը կը թուին բայց գրուածները կը մնան, այժմ ըսէք խնդրեմ, որո՞ւ կուզէիք ձեր հետեւեալ խօսքերը:

«Բ. Եթէ Պ. Յովհաննէսեան իրօք կիմնադրեալ ճիշդ կարգերն աւարտած է, որ կը նշանակէ թէ ըստ բաւականին զիտական պաշար ունի, ուրիշ վարժարանին տնօրէնը փոխանակ անկից օգտուելու, ինչո՞ւ

(*) Միայն վերջին անգամ մըն ալ մենք կը խնդրենք որ մեր գրագի խայտառակագիրն մէջ գրուածներուն պատասխանելով մեզ չի գրադեցնէք: Գիտ. խմբ.

միայն հայերէն լեզուաւ (!) գծագրութիւն եւ քանի մը մանր մանր տառերաներ կը յանձնէ: Մի՛ գուցէ իր տնօրինութիւնը անուանական ըլլայ:» (Շարժում թիւ 372)

Այո՛ այս խօսքերը կուզէիք Շումլացի տնօրէն դասաւորին, տնօնց պատասխանը կարողացիք «Իրաւունք»-ի 15 դեյտ. 93 թիւի մէջ «Իրկոցներ Շումլացի վարժարաններու շուրջ» յոգեւածին մէջ, ու համոզեցաք թէ Շումլացի վարժարաններու տնօրէնք անուանական տնօրէն չէ, իսկ ձեր յարուցած խնդիրները ապացուցուցաւ թէ լոկ կրկոցներ, եւ, հիմա չէ գտնելով ելք մը, տկար մարդոց միջոցներու կը դիմէք փոխանակ հերքելու ափորիզմներ տեղալ զլիւսու: Պ. Շումլացի արոնք պատասխաններ չեն, այլ խուսափելու միջոցներ, այդ գրութիւններով ձեր բարոյականութեան ախպար եւ մաքուր նկարագիր ունեցող բնկերները միայն կրնաք վայրկեանի մը համար ուրախացնել, բայց միայն վաղանցուկ վայրկեանի մը համար:

Ա. Լն.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի թեմերէն հարցուցած են վեհ. Կաթողիկոսին թէ կարելի է հայոց եկեղեցիներուն մէջ հոգեհանգիստ կատարել Հայ-Կաթողիկոսի շնչեցեալ ազգայիններուն համար: Ս. Հայրապետը հեռագրաւ միջոցական պատասխան տը ունեւ է ըսելով թէ՛ Հայաստան եւայց եկեղեցին հոգեհանգստի տարադրութիւն չունի իրեն ըստ նուաճ անգամներուն համար:

Մեր կարծիքով, վեհ. Հայրապետի այս մեծօրական պատասխանը իր կրօնական աշխարհային բնականութեան հետ հաշտ չէ: Ինչպէ՞ս որ Եւրոպայի Հայոց առաջնորդ Տ. Գեորգի կպիտ. իւթիւնեան ուղի խորական օգին տնտեսի նկատելով, Մարտիիոյ Հայոց մատուռին մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարեց ի իշատակ նորոգ հանգուցեալ Հայր Ղեւոնդ Ալիշանի:

— Թիֆլիսի հայ եպիսկոպոս վարժարաններուն մէջ Հայ կրօնի եւ հայ լեզուի պէտք եղած խնամք մը չի տրուելուն համար ծնողներ գանգատած ըլլալով, վեհ. Հայրապետը կոնգրակով մը հրամայած է Թիֆլիսի առաջն. Տիգրայակի յատուկ խնամ տանիլ կրօնի եւ հայ լեզուի դասերուն թէ ներսեւեան հոգևոր Դպրանոցին եւ թէ ինք. նուրոյն կամ պիտական դպրոցներուն մէջ:

— Ռուսահայտակ Հայու մը երգումը Հայո՞ւ թէ Ռուսի եկեղեցիին մէջ պէտք է կատարել: Այս խնդիր նորէն կը յուզուի: Միջոցին հայի մեծած են դատաւան խնդրոյ մը մէջ ուսեբէն երդնուլ: Պաշտօնեանք զանոնք Հայոց եկեղեցին տարած, են ուսեքահաւոյ մը հետ: Հայերը հոն ալ մեծած են ուսեքահաւոյ միջոցու երդնուլ ու հայ քահանայ

պահանջած: Տեղւորն հայ տէրտերը եւ պատասխանած է ուսեքահաւոյն թէ, « Եւ պաշտօն չէ կարող կատարել Հայ եկեղեցիի մէջ: Պաշտօնակարները Թիֆլիսի կրօնական իշխան Կաթողիկոսի կրօնական ղեկավարն: Այս սկալը հեռագրաւ կը հայցնէ Ս. Հայրապետին թէ Հայոց եկեղեցին կարգիլ՝ ուսեքահաւոյն հայերու վրայ երգումի տարադրութիւնը կատարել Հայոց եկեղեցիներուն մէջ: Ս. Հայրապետը կը պատասխանէ թէ հայոց եկեղեցիներուն մէջ ամեն հոգևոր գործողութիւն միմիայն հայ քահանաներու ձեռքով կրնայ կատարուիլ: Իշխանը վեհ. Կաթողիկոսին այս պատասխանը եւ խնդրոյն միւս պարագաները վարիչ Թերակոսին նկատուած պիտի ենթարկէ եղեր, որպէս զի վեհական որոշում մը արուի եւ պապային միօրինակ գործադրուի:

— Կովկասեան տրուեալ հանգէսին շքանշաններ բաշխուած են: Առաջին պատուով վարական ստացող քան ցուցագիրներէ վեցը Հայեր են, որք են՝ Պ. Պ. Ասիլ: Խանով Ե. Ընկ, Կաթողիկոսի Թեմի եւ թաղիքի (բէշ) համար: Էնֆիլէճեան՝ Ժորախոսի համար: Փիթոյեան՝ ձուկի եւ խափարի: Շատինեան՝ Կաթողիկոսեանութեան, եւ Սարաճէվ՝ քահանայի համար: Ոսկի շքադրամ տառադրուած մէջ ալ 20 չափ Հայ արտադրողներ կան:

— Չէյթունի մէջ օգոստոսէ ի վեր հարստիկութ, փողոցուէ եւ ծաղկախտէ մեռնող մանուկներու թիւը 100-ի հասած է: Ցարդ Չէյթունի եւ իր գաւառներուն մէջ բժիշկ բնաւ չկայ: հակառակ եղած խնդրանքին կողմադրութեանը անուղղակի միջոցներով արգելք եղած է հոն բժիշկի մը հաստատուելուն: Պէրսի թիշկական վարժարանին մէջ Չէյթունցի եւ իրաւասարգ մը կը պատրաստուի չի ծնեղավարին համար: Բայց զիւ 2-3 տարի պէտք է որ նա իր ուսման շրջանը աւարտէ:

— Չէյթուն քաղաքի կոնսկր գանուող Գէրժէր պապ պահու ժայռէն կտոր մը փրկած եւ երկու տուն հիմնադրուակ բրած է փրկատակաց տակ մնացողներէն: Եւ անձ մեռած 2 վիրաւորուած են:

— Իրատէ մը արտօնած է Գաւակեօզեան Որոնոցին չինու: Թիւնը Սկիւտարի մէջ Գալֆային զաղը անուանուած գետին վրայ:

— Կրէտէի Գոնտիու քաղաքին հայ եկեղեցւոյն եւ անոր կալուածներուն մատակարարութեանը համար Թաղ խորհուրդ մը ընտրուած եւ պատրիարքական կոնգրակով մը հաստատուած է: Այդ եկեղեցւոյն քահանայապետութիւնը յանձնուած է Տ. Աւետիս քահանային:

— Վանայ Ս. Գրիգորեան Որոնոցին չորս որդւհիներ ամուսնացան այս ամսոյ մէջ: Մին չըքից հարստիկութ մը Պարսիստան հարս գնաց:

Печатница "Взаимостъ", Варна

